ԲԱՆԱՎԵՃ ДИСКУССИИ

ՈՐՏԵՂ Է ԳՏՆՎԵԼ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԻՇԱՏԱԿԱՏ ԲՅՈՒԹԱՆԻԱՆ

Ա. Վ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Գերմանացի արևելագետ Ալֆրեդ Գուտշմիդը Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը» անդրադարձել է երկու ուշագրավ ուսումնասիրությամբ։ 1876 թ. ապրիլի 23-ին Լայպցիգի Սաքսոնական թագավորական գիտական ընկերության նիստում՝ թագավորի ծննդյան օրվա առթիվ, նա հանդես եկավ «Մովսես Խորենացու Հայոց պատմության արժանահավատության մասին» բանախոսությամբ[1]։ Գուտշմիդի ուսումնասիրությունը պարունակում էր աղբյուրագիտական լուրջ դիտարկումներ և բազմաթիվ սրամիտ կռահումներ Խորենացու անձի, մատենագրական ժառանգության և հատկապես «Հայոց պատմության» գիտական արժևորման վերաբերյալ։ Պահպանելով գիտական վստահություն և ընդհանուր դրական վերաբերմունք Խորենացու անձի, նրա ապրած ժամանակի և նրա Պատմության հետապնդած շահերի նկատմամբ, հեղինակն այսուհանդերձ բացահայտում է պատմական անձերի ժամանակակցության մի շարք անպատեհություններ և այլ կարգի ժամանակագրական շեղումներ, մատնացույց անում այն փաստը, որ Խորենացին, չնայած իր հավաստիացումներին, որոշ սկզբնաղբյուրների ծանոթ է միայն Եվսեբիոս Կեսարացու միջնորդությամբ։ Այդ ելույթը հաջորդ իսկ տարին լույս տեսավ հայերեն թարգմանությամբ՝ մի վերնագրով, որ ինքնին արտահայտում էր գերմանացի հայագետի դիտողությունների գնահատականը[2]։

1883 թ. Բրիտանական հանրագիտարանի 9-րդ հրատարակության 16-րդ հատորում Գուտշմիդը զետեղեց մի նոր հոդված՝ «Մովսես Խորենացի» վերնագրով[3], որտեղ ջանում էր սկզբունքորեն ճշտել իր դիրքը Խորենացու ապրած դարի և նրա «Հայոց պատմության» գրության ժամանակի հարցում։ Այստեղ նա բացեիբաց հայտարարում է. «Այս ընթացքում խորանալով հետագա ուսումնասիրությանց մեջ, ես եկա այն հետևության, որ իր աղբյուրների մասին Մովսես Խորենացու հաղորդած մի քանի կեղծ վկայությունները վերաբերում են և իր անձին. «Պատմութիւն հայոց»-ի հեղինակը ոչ թե V դարի հռչակավոր թարգմանիչն է, այլ նրա դիմակի տակ հանդես եկող մի հայ, որ գրել է 634—642 թթ.։ Դրա ապացույցն են հանդիսանում մի կողմից ամբողջ երկի միջով անցնող և Պատմության հետ հաճախ սերտորեն առնչված ուշ ժամանակաշրջանի աշխարհագրական ու ազգագրական անվանացանկը և այդօրինակ անախրոնիզմները, մյուս կողմից այն, որ Պատմության և Աշխարհացույցի հեղինակները միևնույն անձն են, որի մասին, անկասկած, վկայում են ոչ միայն աշխարհագրական տերմինների նույնությունը, այլև

---

[1] Գերմաներեն լույս է տեսել երկու անգամ՝ Alfred von Gutschmid. „Über die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren": Berichte über die Verhandlungen der königlich-sächsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig. Philologisch-historische Classe. Achtundzwanzigster Band. Leipzig. 1876. S. 1—43. Նույնի՝ Kleine Schriften. Bd. III. Leipzig. 1892. S. 282—331.

[2] Գերմանացի Գուտշմիթ գիտնականին Խորենացվույն վրա երած դատաստանը. թարգմ. Հ. Ն. Ջնտոյան.—«Բազմավէպ», Լե, 1877, էջ 45—51, 110—116, 213—222, 289—302։

[3] Alfred von Gutschmid. Moses von Khoren. Encyclopedia Britanica, ninth edition, volume XVI (1883), p. 861—863. Հոդվածի գերմաներեն բնագիրը հրատարակվեց հեղինակի «Մանր երկեր» հինգհատորյակում՝ Alfred von Gutschmid. Moses von Chorene.—Kleine Schtiften. Bd. III, S. 332—338.

մի շարք խիստ առանձնահատուկ ընդհանրություններ (Berührungen)—Աշխարհացույցի հայտնած կարծիքը, առանց այլևայլության, վճռորոշ է (Խորենացու) Պատմության համար»[4]։

Այս երկրորդ ելույթը հայ իրականության մեջ ընդունվեց խիստ բննադատաբար[5]. Վենետիկյան Մխիթարյաններից Բարսեղ Սարգիսյանը ծառացավ հիմնականում Խորենացուն վերագրված Մար-Աբասյան աղբյուրի «կեղծիքի» դեմ։ Բայց այն փաստերը, որոնցով Գուտշմիդը հակադրվում էր Խորենացու V դարին պատկանելու ավանդական պատկերացմանը, այնպես էլ մնացին չհերքված։ Որպես աշխարհագրական ու պատմական անախրոնիզմի նմուշներ Գուտշմիդն այստեղ բերում է Խորենացու Պատմության մեջ հիշատակված Զորրորդ Հայք և Բյուրանիա անվանումները։ Քննենք այդ անախրոնիզմները զատ-զատ։

Խորենացին պատմում է, թե ամբարիշտ Հուլիանոսը՝ հռոմեացիների կայսրը, Տիզբոնի վրա կատարած արշավանքի ժամանակ փորից վիրավորվելով մեռնում է Պարսկաստանում. նոր ընտրված կայսր Հովիանոսը նահանջում է զորքի հետ։ Պարսից Շապուհ թագավորը հետապնդելով հունական զորքին, հասնում է մինչև Բյուրանիա և այնտեղ նստում շատ ամիսներ, բայց չկարողանալով ոչինչ անել, ծովի մոտ մի սյուն է կանգնեցնում՝ վրան դնում առյուծ, ոտքերի տակ մի գիրք, որ նշանակում է՝ ինչպես առյուծը հզոր է գազանների մեջ, այդպես է և պարսկականը (պարսից արքան) թագավորների մեջ. իսկ գիրքը, որ շտեմարան է իմաստության, հռոմեացիների տերությունն է (պատկերում)[6]։

Առաջին հեղինակը, որի մոտ շփոթմունք է առաջացել Բյուրանիայի տեղադրման հարցում, Մովսես Կաղանկատվացին է։ Ի դեպ, «Աղվանից պատմության» հեղինակը հատիկ-հատիկ հավաքել է Խորենացու Պատմության մեջ եղած բոլոր այն տեղեկությունները, որոնք, նրա կարծիքով, կարող էին կապ ունենալ Աղվանքի հետ. ուստի պատահական չէ, որ առաջին դրքի ԺԴ գլխում նա իրար ետևից մեջ է բերում Խորենացու «կայությունները հյուսիսային (կովկասյան) ցեղերի մասին, որոնք Ճորա կապանից (դռնից) դուրս գալով՝ չորս տարի բանակ դրին Աղվանքի սահմաններում[7], իսկ հետո խռովություն բարձրացրին Շապուհ արքայի դեմ[8]։ Որքան էլ տարօրինակ է, վեր-

---

[4] Encyclopedia Britanica. vol. XVI. p. 862B. Kleine Schriften, Bd. III, S. 335–336. Ընդսմին, Ա. Գուտշմիդը հաստատում է Հ. Կիպերտի և Ք. Պատկանյանի կարծիքը, որ Աշխարհացույցը VII դարի գործ է, և փորձում է մի քանի տվյալներով ճշտել այն ժամանակահատվածը, որում գրվել է Աշխարհացույցը՝ Բասրա (Բծրա) քաղաքի հիշատակումը (Աշխարհացույց, էջ 41), որ արաբները հիմնել են 635 թ., արաբների տիրապետության հատուկենտ հետքերը, որոնք Հայաստան մտան, Գուտշմիդի կարծիքով, 651 թ. (ըստ Հյուրշմանի՝ 641 թ.), Թրակիայում սլավոնների (սկլավների) բնակվելու փաստը (Աշխարհացույց, էջ 16), որի մասին Աշխարհացույցի հեղինակը, հավանորեն տեղյակ է այն պատերազմից, որը 657 թ. Կոստաս II կայսրը մղեց նրանց դեմ (Kleine Schriften, S. 337, n. 1, 2).

[5] Բ. Սարգիսյան. Ա. Կուշմիթ ի համապատասխան Բրիտանական և եղած կարծյաց նորա,—«Բազմավեպ», ԽԴ, Վենետիկ, 1886, էջ 1—15։

[6] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց. Տփղիս, 1913, Բ, Հ, էջ 206. Գ, ԺԷ, էջ 275. Գ, ԺԸ, էջ 277. «Ինքն (Շապուհ) զնետ յունական զօրուն կրթէր, և հաւեալ ի Բիւթանիա, և նստէր ամիսս յոլովս։ Եւ ոչ ինչ կարացեալ առնել՝ սիւն առ ծովուն կանգնել, և առեալ ի վերայ դնել, մատեան ընդ ոտիւքն ունելով, որ նշանակէ այսպիսի ինչ. քանզի առեալ հզօր է ի գազանս, նոյնպէս և պարսկականն ի թագաւորս. և մատեան ժողովիչ է իմաստութեան, որպէս Հռոմայեցւոց տէրութիւնն» (էջ 277)։

[7] «Բայց Շապուհ Որմզդեան առ Տիրան մեր արքայ առաւել սէր հաստատեաց. մինչև զօրավիգն օգնականութեան եղեալ՝ թափել զնա յարձակմանէ հիւսիսականացն ազգաց, որք միաբանեալ ելին արտաքս քան զկապանն Ճորայ և բանակեցան ի սահմանս Աղուանից ամս չորս» (Խորենացի, Գ, ԺԸ, էջ 270)։

[8] «Ընդ այնոսիկ ապա ժամանակս յարեաւ խռովութիւն արքային Պարսից Շապհոյ ի հիւսիսականաց ազգաց» (Խորենացի, Գ, ԺԹ, էջ 277)։

ջին դեպքի հետ էլ Կաղանկատվացին կապում է Շապուհի արշավանքը մինչև Բյութանիա. «Թագաւորեալ Տիրանայ Հայոց՝ առնէ խաղաղութիւն ընդ Պարսս և լեալ օգնական Շապհոյ, թափէ զնա ի յարձակմանէ հիւսիսայնոցն, որք ամս չորս բնակեալ յԱղուանս նեղէին զՀայս։ Ապա ըստ բարուց չարին Տիրանայ կուրանայ ի Շապհոյ։ Եւ Արշակ՝ նորին որդի առնու զթագաւորութիւնն։ Ի նմին ժամանակի եղև խռովութիւն Շապհոյ յազգացն հիւսիսոյ. և նա անցեալ ի Բիւթանիա՝ նստի ամիսս յոլովս և ոչ կարաց առնել ինչ։ Ապա սիւն առ ծովակին կանգնեալ և առիւծ ի վերայ՝ մատակ[9] ընդ ոտիւքն ունելով՝ նշան իմն կոչել առիւծ զՊարսս և մատակ՝ զՀռովմայեցւոց տէրութիւնն»[10]։

Դժվար չէ պատկերացնել, որ Կաղանկատվացու մոտ Բյութանիան հայտնըվել է Կովկասյան լեռներից հյուսիս, ինչ-որ ծովակի ափին, որտեղ Շապուհն իբր առյուծ ու գիրք պատկերող սյուն է կանգնեցրել։ Այս շփոթմունքը, հավանորեն, պետք է բացատրել նրանով, որ Կաղանկատվացու ձեռքի տակ եղած Խորենացու Պատմության գրչագրում «(Շապուհ) զհետ յունական զօրուն կրթէր, և հասեալ ի Բիւթանիա»[11] խոսքում յունական աղավաղված է եղել հոնական, որի պատճառով էլ Շապուհը հետապնդել է ոչ թե հույներին, այլ հոներին։ Թերևս այս է պատճառը, որ «Աղվանից պատմության» հեղինակը Խորենացու հաղորդումները ետևառաջ կցելով իրար՝ Շապուհ թագավորի արշավանքը կապել է Կովկասի հյուսիսային ցեղերի՝ հոների հետ և այնպես է կարծել, թե Բյութանիան գտնվում էր Կովկաս լեռների այն կողմում։ Իրականում, խոսքն այստեղ 363 թ. պարսկա-հռոմեական պատերազմի մասին է։

Առարկելով Խորենացուն, Ա. Գուտշմիդը հերքում է 363 թ. պարսից թագավոր Շապուհի Բյութանիա հասնելու փաստը, դիտել տալով, որ պարսիկներն առաջին անգամ Բյութանիա են հասել միայն 608 թ.[12], այն երկարամյա պատերազմի ժամանակ, որ պարսից արքայից արքա Խոսրով II-ն իր բարերար Մորիկ (Մավրիկիոս) կայսեր սպանության վրեժն առնելու համար մղում էր նրան հաջորդած բյուզանդական կայսրեր Փոկասի և Հերակլի դեմ։ Ինչպես վկայում է Սեբեոսը, Խոսրով II-ի զորավար Խոռյամը պատերազմում այնքան հաջողություն ունեցավ, որ հասավ մինչև Քաղկեդոն[13], որ գտնվում էր Բյութանիայում՝ Բոսփորի նեղուցի ափին. «Եւ եղև յայնմ ժամանակի դիմեաց գնաց Խոռեամ զաւրու իւրով ի Քաղկեդոն, և բանակեցաւ դէմ յանդիման Բիւզանդիայ, և խնդրէր անցանել և գերել զքաղաքն թագաւորանիստ (Կոստանդնուպօլիս)»[14]։

Արդ, եթե Խորենացուն ծանոթ է պարսիկների Բյութանիա հասնելու պատմական փաստը, ուրեմն նա ապրել է այդ դեպքին հաջորդած ժամանակաշրջանում, Ա. Գուտշմիդի կարծիքով՝ VII դարի առաջին կեսին։

Գերմանացի հայագետին հետևելով, 608 թ. վկայակոչում է և Գր. Խալաթյանցը. «Սա մեկն է Խորենացու մոտ եղած այն ցցուն անաքրոնիզմնե-

---

9 Մատակ պարսկերեն՝ մատյան, գիրք։

10 Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Երևան, 1983, Ա, ժգ, էջ 30—31։

11 Խորենացին. Գ, ժը, էջ 277։

12 Alfred von Gutschmid. Kleine Schriften, Bd. III, S. 335, n. 2.

13 Քաղաք Բյութանիայում Բոսփորի նեղուցի ափին, Պոնտական ծովի մուտքի մոտ (Strabonis Geographica, Parisiis, 1853, XII, 4, 1—2): Հմմտ. Աշխարհացույց. էջ 13՝ «Քաղկեդոն Բիւթանացւոց»։

Պարսից զորավար Խոռյամը գրավեց Բյութանիայի Քաղկեդոն քաղաքը ոչ թե 608 թ., ինչպես կարծում է Ա. Գուտշմիդը, այլ Խոսրով II-ի թագավորության ԼԴ-երորդ տարում (Սեբէոս, ԼԸ, էջ 123), այն է՝ 624 թ., կամ ԼԵ-երորդ տարում (Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, II, 9, էջ 128)՝ 625 թ.։ Խոսրով II Ապրվեզը դահ է բարձրացել 590/1 թ.։

14 Պատմութիւն Սեբէոսի. Երևան, 1979, գլ. ԼԸ, էջ 122։

ից,—գրում է նա,—որոնք բացահայտում են նրա Պատմությունը շարադրելու ժամանակը, որ, համենայն դեպս, VII դարից այն կողմ չի անցնում, ինչպես նկատել է Ա. Գուտշմիդը»[15]։

Ավանդական Խորենացու շատագովները, չկարողանալով հերքել Ա. Գուտշմիդի մեկնաբանումը, կամ լռության էին մատնում այդ փաստը, կամ լավագույն դեպքում բավարարվում էին սոսկ այն հիշատակելով՝ խուսափելով որևէ բացատրությունից։ Այդպես է վարվել, օրինակ, ակադ. Ստ. Մալխասյանցը Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանության ծավալուն ներածության մեջ[16]։

Նշված անաքրոնիզմը հետազոտողների կողմից տասնամյակներ շարունակ ոչ միայն չհերքվեց, այլև գտավ նորանոր կողմնակիցներ։ 1961 թ. «Հանդես ամսօրյա»-ի № 10—12-ում տպագրված «Կեղծ Մովսես Խորենացու տարեթվի շուրջ» անգլերեն հոդվածում Կ. Թումանովը կրկին անդրադարձավ այդ «անառարկելի» ապացույցին՝ Մովսես Խորենացու կեղծիքը բացահայտելու և այս անգամ արդեն նրան VIII դար փոխադրելու միտումով, նշելով, թե կեղծ Մովսեսը «խոսում է իրանցիների մի ներխուժման մասին մինչև Բյութանիա (Bithynia) Բյուզանդական կայսրության դեմ մղած պատերազմում։ Պատմության մեջ առաջին անգամ դա տեղի է ունեցել 604—629 թթ. պատերազմի ժամանակ»[17]։

Կրկնելով Կ. Թումանովին, Ռ. Թոմսոնը Խորենացու անգլերեն թարգմանության ներածության մեջ նույնպես մատնանշում է պատմական փաստի շփոթությունը Կեղծ Մովսեսի մոտ. «Մովսեսին հայտնի է իրանյան մի առաջխաղացում մինչև Բյութանիա. միայն 604—629 թթ. պատերազմի ժամանակ է, որ իրանցիները առաջացան այդքան արևմուտք»[18]։ Հետևությունը պարզ է՝ VIII դարում ապրած կեղծ Մովսեսը ծանոթ է եղել VII դարի սկզբին տեղի ունեցած պատմական անցքին և այն վերագրել է IV դարի պարսից Շապուհ թագավորին։

Տեսնենք, թե ինչ են հաղորդում այս առթիվ IV դարի հռոմեական պատմագիրները, որոնք ժամանակակից են նշված պատմական անցուդարձերին։ Ամմիանոս Մարկելինոսը, որ ուղեկցել էր Հուլիանոսին նրա շատ արշավանքների ժամանակ, Խորենացու նման, բայց շատ ավելի հանգամանորեն պատմում է 363 թ. Հուլիանոս կայսեր Պարսկաստան կատարած արշավանքի մասին, որը զորքով պաշարում է Տիզբոնը[19], բայց համառ դիմադրության հանդիպելով և մթերքի սակավության պատճառով, ստիպված է լինում նահանջել և Սումերե (Զոսիմոսի մոտ՝ Suma—III. 30,3) բերդաքաղաքից ոչ հեռու մի մարտի ժամանակ, առանց զրահի նետվելով թշնամու դեմ՝ տեգի հարվածով խոցվում է կողից ու լյարդից և նույն գիշերը մեռնում է վրանում 363 թ. հունիսի 26-ին (25.3,7)։ Հռոմեական զորքը հենց նույն տեղում

---

15 Г. Халатьянц. Армянские Аршакиды. М., 1903, часть I (Исследование) . 236—237.

16 Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանություն և ներածություն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի. Երևան, 1961, էջ 53։

17 Cyrill Toumanoff. On the date of Pseudo-Moses of Chorene- «Հանդես ամսօրյա», 1961, № 10—12, էջ 469։ Տե՛ս նաև C. Toumanoff. Studies in christian caucasian history. Wetteren, 1963, p. 331. Հարկ է նշել, որ այս փաստարկն առաջ է քաշել ոչ թե Ֆ. Կ. Կոնիրերը «Բրիտանական հանրագիտարանի» 11-րդ հրատարակության մեջ (col. 898, n. 1), ինչպես երկու անգամ ծանոթագրում է Կ. Թումանովը, այլ գերմանացի արևելագետ Ա. Գուտշմիդը նույն հանրագիտարանի 9-րդ հրատարակության մեջ 1883 թ.։

18 R. W. Thomson. Introduction, p. 59. In: Moses Khorenats'i. History of the Armenians. Cambridge (Massachusetts), London (England), 1978, տե՛ս նաև p. 272, n. 3.

19 Ammianus Marcellinus. Römische Geschichte (Rerum gestarum), lateinisch und deutsch. Mit einem Kommentar versehen von Wolfgang Seyfarth, in 4 Bänden. Berlin, 1970, XXIV. 8, 6.

կայսր է ընտրում Հորիանոսին, որը հարկադրված եղավ Շապուհի հետ հուլիսի սկզբին կնքել Երեսնամյա հաշտություն, որ Ամմիանոսն անվանում է «ամոթալի դաշինք» (dedecore foedera—25. 9, 11)։ Այդ պայմանագրով հռոմեացիք Պարսկաստանին զիջեցին հարավային Հայաստանի հինգ նահանգներ՝ Աղձնիք, Մոկք, Ծավդեք (Զաբդենից), Ռեհիմենե[20] և Կորդուք՝ 15 ամրոցների հետ միասին, ինչպես և Միջագետքի Մծբին և Սինգարա (Շնգար) քաղաքները և Castra Maurorum բերդը[21]։

Մյուս աղբյուրներն ավելի հստակ պատկերացում են տալիս պարսիկների առաջխաղացման մասին, նշելով, որ բացի հայկական նահանգներից նրանց տիրապետության տակ անցավ և ամբողջ Ասորական Միջագետքը, որ Ծփրատ գետով սահմանակից էր բուն Ասորիքին։ Այսպես, V դարի հայ պատմիչ Փավստոս Բուզանդը ճշմարտացի արտացոլելով Հորիանոս կայսեր կնքած «ամոթալի դաշինքի» իրողությունը, հաղորդում է՝ հունաց թագավորը նեղն էր ընկել և նեղության տագնապի մեջ երդմնագիր (ուխտից նամակ) գրեց ու կնքեց, որով Շապուհ թագավորին զիջեց Սծրինն (Նծբին) ու Ասորոց Միջագետքը[22]։

Փավստոսի այս ուշագրավ տեղեկությունը հաստատում է և VI դարի բյուզանդական ժամանակագիր Մալալան, ըստ որի պարսից թագավոր Սաբորարշակիոսը (իմա՝ Շապուհը)[23], հենց որ լսեց Հուլիանոսի մահը, հաշտության բանակցությունների համար Պերսարմենիայից Հորիանոսի մոտ ուղարկեց իր ամենաերևելի նախարարներից Սուրենասին, և կնքված հաշտության համաձայն հռոմեացիները պարսիկներին հանձնեցին ամբողջ Մյուգդոնիա երկիրը՝ նրա Մծբին մայրաքաղաքով հանդերձ[24], այն է՝ հյուսիսային Միջագետքը[25]։

Այնուհետև Ամմիանոսից տեղեկանում ենք, որ Հորիանոսը զորքի հետ նահանջեց Միջագետքով, Ասորիքով և Կիլիկիայում, Տարսոնի մոտ, Տավրոսի կիրճերից մեկում հողին հանձնելով Հուլիանոսի աճյունը, շարժվեց դեպի Կոստանդնուպոլիս՝ երկյուղ կրելով Պրոկոպիոսի ապստամբությունից, բայց Բյութանիա հասնելով, հանկարծամահ եղավ 364 թ. փետրվարի 17-ին Դադաստանա քաղաքում[26]՝ Բյութանիայի և Գաղատիայի սահմանագծում

---

20 Ռեհիմենեն Ա. Գարագաշյանը նույնացնում է Հեր և Զարևանդ գավառների հետ (Քննական պատմութիւն հայոց, մասն Գ, Թիֆլիս, 1895, էջ 85)։

21 Է. Հոնիգմանը ենթադրում է, որ դա ներկայիս Բարիլն է՝ Իրաքում, Բաղդադից ոչ հեռու (E. Honigmann. Die Ostgrenze des Byzantinischen Reichs. Bruxelles, 1935. S. 5, n. 3).

22 Փավստոս Բուզանդ, Դ, իա, էջ 210—211. «Այլ իբրև եղև խաղաղութիւն ի մէջ թագաւորացն Յունաց և ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ, ուխտից նամակ գրեալ և կնքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից։ Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Ետու քեզ, ասէ դնծբին քաղաք՝ որ է յԱրուեստանի և զՄիջագետս Ասորոց. և Մէջաշխարհին Հայոց՝ ձեռնթափ եմ, ասէ. թէ կարասցես յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա։ Արդ ի նեղ ուրեմն անգեալ թագաւորն Յունաց, և ի նեղին վշտի՝ զայս ձե օրինակի բանիցն կնքէր մուրհակ և տայր թագաւորին Պարսից. և ապա ճողոպրէր ի նմանէ»։

23 Շապուհ Բ երկարակյացը (309—373) Սասանյանների տոհմից էր. այստեղ Արշակ պետք է հասկանալ արքա իմաստով։

24 Johannis Malalae Chronographia. Lib. I, p. 335—336 (Migne. Patrologiae graecae. T. 97, col. 501).

25 Ըստ Ստրաբոնի Մյուգդոնիա կոչվում էր լեռնային Միջագետքը Մասիոս լեռան հարավում, որի ստորոտում էր Նիսիբիս (Մծբին) քաղաքը, որ անվանում էին նաև Մյուգդոնիս Անտիոք. այդտեղ հիշվում են նաև Տիգրանակերտ և Խառան (Carrai) քաղաքները (Strabo. XI. 14. 2; XV. 1. 2[1]).

26 Դադաստանան գտնվում էր Բյութանիայում, Անկյուրայից դեպի Նիկիա տանող ճանապարհին, որոշակի տեղը հայտնի չէ։

(XXV. 10, 12)։ Ամմիանոսը վկայում է նաև, որ պարսից զորքը կրնկակոխ հետևում էր նահանջող հռոմեացիներին և Միջագետքի ազատված քաղաքների ու բերդերի վրա բարձրացնում պարսկական դրոշը։

Խորենացին, թեև շատ համառոտ, բայց ճշգրիտ վերարտադրել է պատմական իրողությունը. «Այս Խոռոհբուտ դպիր եղեալ Շապհոյ թագաւորին Պարսից, և ի ձեռս Յունաց անկեալ, յորժամ Յուլիանոս, որ և Պառաբատոսն[27], զօրու հանդերձ ի Տիզբոն չոգաւ, և ի մեռանելն նորա անդ, ընդ Յոբիանու. ի Յոյնս ընդ արքունական սպասաւորսն եկն...»[28]. «Զայսու ժամանակաւ թագաւորեաց Յունաց ամբարիշտն Յուլիանոս [...] Եւ յորժամ զնա ընդդէմ Պարսից իրաւունքն զինեցին, և անցեալ ընդ Կիլիկիայ հասանէր ի Միջագետս. և զօրացն Պարսից կողմնապահաց հատեալ զչուանս նաւակամրջին Եփրատու, զգուշանային անցիցն։ Իսկ Տիրան մեր թագաւոր իջեալ ընդ առաջ Յուլիանոսի, դիմէ ի վերայ Պարսից զօրացն, և հալածականս առնէ [...] Եւ խնդիրս առնէ, զի մի՛ տարցի զնա ընդ իւր ի Պարսս»[29]—«Յետ այսր ամենայնի ամբարիշտն Յուլիանոս ըստ արժանի խորհրդոցն վէր ընկալեալ ի փորոտիսն՝ սատակի ի Պարսս։ Եւ զօրացն դարձեալ, թագաւոր ունելով զՅորիանոս, որ ի ճանապարհի վախճանեալ՝ ոչ ժամանեաց ի Բիւզանդիոն (Կոստանդնուպոլիս—Ա. Մ.), իսկ արքային Պարսից Շապհոյ զհետ նոցա կրթեալ»—«ինքն (Շապուհ) զհետ յունական զօրուն կրթէր, և հասեալ ի Բիւթանիա, և նստէր ամիսս յոլովս»[30]։

Եթե Խորենացու մոտ բերված փաստերը համադրենք Ամմիանոսի հույժ մանրակրկիտ նկարագրության հիմնական դրվագներին, կարելի է ասել, որ մեր Պատմահայրը թեև համառոտ, բայց միանգամյան հարազատ է ուրվագծում պատմական դեպքերը՝ Հուլիանոսի արշավանքը դեպի Տիզբոն, նրա կործանումը, հռոմեական զորքի նահանջի ընթացուղին Տիզբոնից մինչև Բյութանիա, Հոբիանոսի անակնկալ վախճանը Բյութանիայում։ Այդ փաստերն առկա են նաև այլ հույն ու լատին հեղինակների մոտ։ Միայն Շապուհի Բյութանիա հասնելու փաստն է, որ հայտնի չէ այլ աղբյուրներից։ Մյուս կողմից, եթե անգամ Խորենացին ապրած լիներ VIII—IX դդ., դժվար է համոզվել, որ նրա նման ուշիմ պատմագիրն այդ աստիճան շփոթեր փաստերը և միամտորեն կամ թեկուզ միտումնավոր կերպով պարսից Խոյամ զորավարի արշավանքը Բյութանիա վերադրեր IV դարի պարսից թագավոր Շապուհ Երկարակյացին։ Ուստի տարակույս չի կարող լինել, որ այդ փաստը ևս Խորենացին գտել է այն աղբյուրում, որտեղից քաղել է մյուս ստույգ տեղեկությունները։ Հենց Ամմիանոսի երկար ու ձիգ պատմածը համառոտելու դեպքում կարելի է այնպես պատկերացնել, թե Շապուհը, հետապնդելով հռոմեական զորքին, նրա նահանջի ճանապարհով Հոբիանոսի հետքով հասել է մինչև Բյութանիա։ Այսպիսի համառոտումները սակավ չեն հունա-հռոմեական մատենագրության մեջ։

Ի դեպ, IV դարի մի այլ հռոմեացի հեղինակ՝ Եվտրոպիոսը «Հռոմի հիմնադրումից սկսած» համառոտագրության մեջ հաղորդում է. «Եվ երբ զորքը ամեն բանի պակասություն էր զգում, նա (Հոբիանոսը) մի քանի անգամ պարտություն կրելուց հետո, Շապուհի հետ հաշտություն կնքեց, թեև անհրաժեշտ, բայց անպատիվ՝ իբրև տույժ զիջելով Հռոմեական կայսրության սահմաններից մի քանի մարզեր, ինչ որ դրանից առաջ՝ Հռոմի հիմնադրումից հազար հարյուր տասնութ տարի անց երբեք չէր եղել։ Մինչև անգամ մեր լեգեոններին Կավդիումի մոտ՝ Պոնտիուս Տելեսինուսի ձեռքով[31]

---

27 Ուրացող, ուխտազանց, ուխտադրուժ (հուն.)։

28 Խորենացի, Բ, հ, էջ 206։

29 Նույն տեղում, գ, ժգ, էջ 270—271։

30 Նույն տեղում, գ, ժէ, էջ 275, ժը, էջ 277։

31 Per Pontium Telesinum. Պոնտիուս Տելեսինուս անձնանունն է, որ Եվտրոպիոսի լատիներեն բնագրում հավանորեն աղավաղված է։ Տիտոս Լիվիոսի մոտ սամ-

և՛ Հիսպանիայում՝ Նումանտիայի մոտ, և՛ Նումիդիայում անց կացրին լծի տակով, որպեսզի ոչ մի սահման չզիջվեր (թշնամուն)։ [...] Քանզի, թե՛ սամնիացիներին, թե՛ նումանտիացիներին և թե՛ նումիդներին անմիջապես պատերազմ հայտարարվեց և հաշտությունը խափանվեց»[32]։ Թեև Եվտրոպիոսը եվրոպական պատմագիտության մեջ ճանաչված է իբրև ստուգապատում հեղինակ, բայց վերը բերված նրա վկայություններում լուրջ աղավաղում կա. նրա հիշատակած Կավդիումի ճակատամարտը, երբ սամնիացիները հռոմեական պարտված լեգեոններին իբրև անարգանք զինաթափ անցկացրին նիզակի տակով, տեղի է ունեցել մ. թ. ա. 321 թ.[33], իսկ Նումիդիայի ճակատամարտը՝ մ. թ. ա. 110 թ.[34], այնինչ Եվտրոպիոսի բնագրից այնպես է հասկացվում, թե այդ բոլոր դրվագները վերաբերում են 363 թ. պարսկա-հռոմեական պատերազմին[35]։

Պարզվում է, որ Եվտրոպիոսն իր տեղեկությունները քաղել է Ամմիանոսի «Հռոմեական պատմությունից», և քանի որ վերջինս պատմելով Հոբիանոսի կրած ամոթալի պարտության մասին, այն համեմատել է պատմական հեռավոր անցյալում՝ 5—8 դար առաջ հռոմեական զորքի կրած խայտառակ պարտությունների հետ, ուստի Ամմիանոսի բնագրի անփույթ համառոտման պատճառով[36], այս միջանկյալ տեղեկությունները Եվտրոպիոսի մոտ սպրդել են բուն 363 թ. դեպքերի շարադրանքի մեջ իբրև ժամանակակից անցքեր։

Իր հերթին Եվտրոպիոսից այս ամբողջ հատվածը նույնությամբ փոխ է առել Լանդոլֆուս Սագաքսը (Սրամիտ) Պաուլուս Դիակոնի «Հռոմեական պատմության» իր հավելումներում[37]։ Նշենք, որ Եվտրոպիոսի և Լանդոլֆուսի քննական հրատարակության լուսանցքներում մի առ մի ցույց են տրված բոլոր այն սկզբնաղբյուրները, որոնցից օգտվել են այդ հեղինակները, բայց Ամմիանոսից նրանց կատարած բանաքաղությունները, որ ցույց տվինք վերը, չեն նկատվել։ Ուստի այս փաստի վրա հրավիրելով մասնագետների ուշադրությունը, ուզում ենք ընդգծել, որ Խորենացու արժանահավատության հարցը խստորեն քննելիս՝ ավելի անաչառ կլիներ նախ և առաջ նկատի առնել նրա օգտագործած սկզբնաղբյուրների վավերականությունը, որ մշտապես եղել է Պատմահոր մտահոգության առարկան։ Զուր չէ, որ, կարծես դիմելով ապագայի խստապահանջ քննադատներին, Խորենացին գրում է. «Եվ մենք ասում ենք, որ մենք այս պատմության մեջ ճշմարտախոս ենք եղել մեր դիտավորությամբ և ուղղամտությամբ. իսկ ինչ վերաբերում է նրանց, որոնցից հավաքել ենք, այդ աստծուն է հայտնի, նրանք գովելի են, թե պարսավելի, այդ մեզ չի վերաբերում, մենք հնում ենք դրանցից»[38]։

Սակայն վերադառնանք մեր բուն խնդրին.

Նիացիների գորագլուխն է և կոչված է Pontius Herennius (IX, 4, 1—3) կամ Pontium Herennii filium (հայց. հոլով)—Պոնտիուս Հերեննիուսի որդի (IX, 1, 2)։

[32] Evtropi Breviarium ab urbe condita, Berolini, 1897. Editio nova, 1961, X, 17, 1—2, p. 181.

[33] Titi Livi Ab urbe condita. Libri. Bd. III, Leipzig, 1854, IX, 1—12, p. 211—264.

[34] Calus Crispus Sallustius. De bello Iugurthino. Lipsiae, 1886, p. 38.

[35] Հռոմի հիմնադրման 1118 թ. համապատասխանում է մ. թ. 365 թ.։

[36] Օրինակ զեղչված է՝ ut temporibus priscis apud Furcas Caudinas (Ammianus Marcellinus. Römische Geschichte, in 4 Bänden. Buch XXV, 9, 11)—«ինչպես հեռավոր ժամանակներում Կավդիումի դարպասների մոտ»։

[37] Landolfi Sagacis Additamenta ad Pauli Historiam Romanam. Berolini, 1879 p. 339.

[38] Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մելիքսետյանցի. Ա, ԺԹ, էջ 117։ Բնագրում՝ «Եւ ասեմք լինել արդարարան ի պատմութեանս յայսմիկ ըստ մերոյ յօժարութեան և ուղղամտութեան. իսկ ըստ որոց հաւաքումն՝ Աստուծոյ լինել յայտնիս, և մարդկան գովելիս կամ բասելիս. մեք այնոցիկ օտար և ի բաց կացեալ» (Ա, ԺԹ, 1913, էջ 57)։

Արդյո՞ք պարսկական զորքը 604—629 թթ. կռիվների ընթացքում է միայն թափանցել պոնտական Բյութանիա, ինչպես պնդում են հետազոտողները Ա. Գուտշմիդից մինչև Ռ. Թոմսոն։ Այդ հարցին պետք է պատասխանել բացասաբար։ Որ պարսիկները Բյութանիան գրավել են նաև IV դարի առաջին կեսին, այդ մասին միանգամայն վստահելի տեղեկություն է տալիս Ամմիանոս Մարկելինոսը «Հռոմեական պատմության» մեջ։ Հերքելով իր պաշտելի Հուլիանոս կայսեր անվան շուրջ տարածված հերյուրանքները, թե նա իր ամբարիշտ բնավորությամբ պարսիկներին գրգռեց հռոմեացիների դեմ և երկիրը ներքաշեց ավերիչ պատերազմների մեջ, Ամմիանոսը, պատասխանելով այդ զրպարտիչներին, բացահայտում է մեզ համար կարևոր պատմական փաստը. «Ոչ թե Հուլիանոսը, այլ Կոստանդիանոսն էր, որ բորբոքեց պարթևների թշնամանքը, քանզի նա հաճությամբ ընդունեց մի ոմն Մետրոդորոսի ընչաքաղց կեղծավորությունը, ինչպես ավելի վաղ մանրամասն հաղորդել ենք։ Նրա մեղքով է, որ մեր զորքերը սաստիկ հարվածներ կրեցին, մի քանի անգամ էլ ռազմական ջոկատները գերի ընկան, ամրությունները խլվեցին կամ քաղաքներն ավերվեցին, խորտակվեցին։ Պրովինցիաներից ծանր տուրքեր կորզվեցին և իրենց հավակնություններն իրագործելու համար պարսիկներն արշավեցին մինչև Բյութանիա և Պրոպոնտիայի ծովափը [...] Իսկ այս երիտասարդը գրեթե ապշեցուցիչ արագությամբ վերստին կարգի բերեց ամեն ինչ, երբ Կեսարի կեղծ տիտղոսով Արևմուտք ուղարկվեց, և թագավորները նվաստ ստրուկների նման ճողոպրեցին առջևից»[39]։

Ամմիանոսի խոսքից («ut dudum rettulimus plene»— «ինչպես ավելի վաղ մանրամասն հաղորդել ենք») երևում է, որ «Հռոմեական պատմության» նախորդ, այժմ կորած գրքերից մեկում նա մանրամասն պատմած է եղել Մետրոդորոսի և Հռոմի կայսր Կոստանդիանոս Մեծի (առաջին) հետ կապված ինչ-որ միջադեպի մասին։

XI դարի վերջի և XII դարի սկզբի բյուզանդական մատենագիր Գեորգիոս Կեդրենոսը[40], որ ծանոթ է եղել Մետրոդորոսի արկածախնդրության վերաբերյալ Ամմիանոսի պատմածին, վկայում է, որ Կոստանդիանոս Մեծի թագավորության 21-րդ տարում (իմա՝ 325/6 թ.—Ա. Մ.), պարսից թագավոր Շապուհը զրպարտության հետևանքով հալածանք հարուցեց քրիստոնյաների դեմ և կոտորեց նրանցից 18 հազար մարդ, որի պատճառով խանգարվեց խաղաղությունը հռոմեացիների և պարսիկների միջև։ Այդ նշանակում է, որ Շապուհի արշավանքը Բյութանիա և Պրոպոնտիա տեղի է ունեցել 325/6 թ. հաջորդող տարիներին։

Աշխարհացույցը Բյութանիան տեղադրում է Հունական (Միջերկրական) ծովի հյուսիս-արևելյան ափին՝ Հելեսպոնտոսի հարևանությամբ[41]։ Ապա և տալիս է հետևյալ նկարագրությունը. «Ա. Աշխարհ Ասիայ Բիւթանիա. յելից Կոստանդնուպօլսի, հանդերձ մտիւք ծովագետին Պոնտոսի որ կոչի Թրակական Փաւսփորոս, մասամբ ինչ Պրոպոնտեայ...»[42]։ Պրոպոնտիսը կամ Պրոպոնտիան ներկայիս Մարմարա ծովն է։

Պարսիկների կողմից պոնտական Բյութանիա և Պրոպոնտիայի ծովափը ներխուժելու այս պատմական փաստը, որ գտնում ենք Ամմիանոսի մոտ, վերաբերում է Կոստանդիանոս առաջինի (305—337) կամ նրա հաջորդ Կոս-

---

[39] Ammianus Marcellinus. Römische Geschichte. XXV. 4, 23—24: „non Iulianum, sed Constantinum ardores Parthicos succendisse, cum Metrodori mendaciis avidius acquiescit, ut dudum rettulimus plene. unde caesi ad indignationem exercitus nostri, capti militares aliquotiens numeri, urbes excisae, rapta munimenta vel diruta provinciae gravibus impensis exhaustae et ad effectum tendentibus minis cuncta petebantur a Persis ad usque Bithynos et litora Propontidis".

[40] Georgii Cedreni Compendium historiarum, cui subjiciuntur (J.—P. Migne. Patrologiae graecae, t. 121, col. 561).

[41] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ. Վենետիկ, 1881, էջ 11։

[42] Նույն տեղում, էջ 22։

տանցիոս (Կոստանդ) կայսեր (337—361) տարիներին, և սրա հաստատումը գտնում ենք հենց Խորենացու մոտ։ Պատմահայրը հաղորդում է, որ Շապուհ Որմզդյանը (Շապուհ II) հայոց Տիրան թագավորի (339—350) օրոք «Շատ ազգերից օժանդակություն գտնելով՝ հարձակվեց Միջերկրեայքի և Պաղեստինի վրա»[43]։

Ըստ Աշխարհացույցի Միջերկրայէ կամ Միջերկրէ կոչվում է ընդհանուր Ասիայի նախակողմը, որ ընկած է Հունաց (Միջերկրական) ծովի և Պոնտոսի (Սև ծով) միջև[44], այսինքն այն թերակղզին, որ հույներն անվանում էին Անատոլիա (Արևելք) կամ Ասիա, իսկ VI դարից նաև Փոքր Ասիա[45]։ Միջերկրայքում Աշխարհացույցը տեղադրում է 17 երկիր, այդ թվում՝ Բյութանիա, Գաղատիա, Կապադովկիա, Կիլիկիա և երեք Հայքերը։ Տվյալ դեպքում Խորենացու վկայության մեջ Միջերկրեայքը լիովին համընկնում է Աշխարհացույցի ընկալմանը։ Եթե ի մի բերենք Ամմիանոսի և Խորենացու տվյալները, ապա կարելի կլինի ասել, որ հայոց Տիրան թագավորի և ուրեմն նաև Հռոմի Կոստանցիոս կայսեր տարիներին պարսից զորքը Շապուհ II-ի գլխավորությամբ ներխուժել է Միջերկրեայքի Բյութանիա երկրամասը և հասել մինչև Պրոպոնտիայի՝ ներկայիս Մարմարա ծովի ափերը։

Շապուհ II-ի հարձակումը Միջերկրեայքի և Պաղեստինի վրա ենթադրել է տալիս, թե պարսիկները պետք է ներխուժած լինեն նաև Ասորիք։ Դրա հաստատումը ևս գտնում ենք Ամմիանոս Մարկելինոսի մոտ՝ Բզաբդեի ճակատամարտի նկարագրության մեջ։ Կոստանցիոս (Կոստանդ) կայսեր վերջին ճակատամարտը պարսիկների դեմ, որ նկարագրում է և Խորենացին, տեղի ունեցավ 361 թ. աշնանը Բզաբդե[46] բերդաքաղաքի համար (հյուսիսային Միջագետքում՝ Ամիդից ոչ հեռու)։ Ճակատամարտի տասներորդ օրը, տեսնելով, որ քաղաքի պաշտպաններն անձնատուր չեն լինում, հռոմեացիները վճռեցին «պարիսպներին մոտեցնել այն վիթխարի խոյը, որի հարվածներով պարսիկներն ավերել էին Անտիոքը։ Սրանք հետո իրենց հետ խոյը տարան Անտիոքից և թողեցին Կառհայում (Carrhae)»[47] (այստեղ՝ Կառհայում էլ խոյն ընկավ հռոմեացիների ձեռքը)։ Ամմիանոսի այս վկայությունը հաստատում է, որ նախքան 361 թ. Բզաբդեի ճակատամարտը, պարսիկներն արշավել էին

---

43 Խորենացի, Գ, ժբ. «Բայց Շապուհ Որմզդեան առ Տիրան մեր արքայ առաւել սէր հաստատեաց. մինչև զօրավիգն օգնականութեան եղեալ՝ թափէ զնա յարձակմանէ հիւսիսականացն ազգաց, որք միաբանեալ ելին արտաքս քան զկապանն Ճորայ և բանակեցան ի սահմանս Աղուանից ամս չորս։ Եւ զայլ յոլով թագաւորս նուաճեալ Շապհոյ, և զազգս բարբարոսաց բազումս ի սատարութիւն կալեալ՝ յարձակեցաւ ի Միջերկրեայս և ի Պաղեստինէ»։

44 «Եւ է նախակողմն (var. նախ զկողմն) [ընդհանուր Ասիոյ] Միջերկրայք, որք մտանեն ընդ մէջ Յունաց ծովուն եւ Պոնտոսի, վասն որոյ եւ Միջերկրէ կոչին» (Աշխարհացոյց», էջ 21—22։ Մատենագրութիւնք Մովսեսի Խորենացւոյ, Վենետիկ, 1865, էջ 600)։

45 Հմմտ. Խորենացի, Ա, ը, էջ 29, Բ, ժդ, էջ 127, Բ, ժե, էջ 129, Բ, իե, էջ 142։

46 Ammian Marc., XX. 11, 1—32. Բզարդեի պաշարման ժամանակ հռոմեացիներն ու պարսիկները երկուստեք ծանր կորուստներ կրեցին, ուստի Կոստանցիոս կայսրը, երկյուղ կրելով իր գաղգած զորքերի ընդվզումից, որոշեց ետ քաշվել Ասորիք և ձմեռել Անտիոքում (Ammian. Marc.,): XX, 11, 31—32): Ճակատամարտի այս ելքը լիովին համընկնում է Խորենացու տված գնահատականին. «Իսկ Կոստանդեայ արարեալ կեսար զՅուլիանոս՝ սպառաղինեցաւ ընդդէմ Պարսից. և տուեալ ճակատ, երկոքին կողմանքն պարտեցան. քանզի բազումք անկան յերկաքանչիւրոցն. և ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց. մինչև ի հաւանութիւն նկնալ՝ արարին խաղաղութիւն ամս սակաւ» (Խորենացի, Գ. ժբ, էջ 270)։

47 Ammian Marc., XX. 11, 11. Carrhae. այլ հեղինակների մոտ Carrae. հայկական աղբյուրներում՝ Խառան—քաղաք Միջագետքում՝ Եդեսիայից հարավ-արևելք (ներկայումս՝ Հարան). այստեղ մ. թ. ա. 53 թ. պարտություն կրեց և սպանվեց հռոմեացի զորավար Կրասոսը պարթևների հետ մղած ճակատամարտում։

Ասորիքի մայրաքաղաք Անտիոքի վրա, որն ըստ երևույթին պետք է վերագրել Շապուհ II-ի կատարած արշավանքին դեպի Միջերկրեայք և Պաղեստին[48]։

Այսպես ուրեմն, Ամմիանոս Մարկելինոսի մոտ պահպանված պատմական փաստը, որ Շապուհ թագավորի օրոք պարսիկները ներխուժել են Բյութանիա և Պրոպոնտիա, միանգամայն բավարար է մերժելու համար այն «անհերքելի» ապացույցներից մեկը, որոնց հիման վրա ժխտվում է Մովսես Խորենացի անունով պատմագրի գոյությունը V դարում, իսկ նրա հեղինակած «Հայոց պատմությունը» համարվում է VII—IX դդ. ապրած ինչ-որ վանականի հորինվածք։ Եթե Խորենացու «Հայոց պատմության» մեջ իրոք փաստերի շփոթություն կա, ապա կարելի է կարծել, թե 325—350 թթ. միջև պարսիկների դեպի Բյութանիա կատարած արշավանքն է, որ վերագրվել է 363 թ. պարսկա-հռոմեական պատերազմին, այլ ոչ թե VII դարի սկզբին տեղի ունեցած իրանա-բյուզանդական երկարամյա պատերազմների ժամանակ պարսից Խոյամ զորավարի Քաղկեդոն հասնելու փաստը։ Այդ դեպքում փաստերի շփոթությունը պետք է վերագրել պարզապես V դարի Պատմահայր Մովսես Խորենացուն կամ նրա սկզբնաղբյուրին, և ամենևին հարկ չկա Բյութանիայի առեղծվածը բացատրելու համար հորինել VII—IX դդ. ապրած ինչ-որ Կեղծ Մովսես։

Բայց խնդիրը միայն Կեղծ Մովսեսը չէ։ Մի ամբողջ շարք նշանավոր գիտնականներ՝ Ա. Գուտշմիդից մինչև Ռ. Թոմսոն, արդեն ավելի քան հարյուր տարի, միահամուռ կրկնում են, թե պարսից զորքը առաջին անգամ Բյութանիա է հասել միայն VII դարի սկզբում, մինչդեռ պարզվում է, որ առաջին անգամ դա տեղի է ունեցել IV դարի առաջին կեսին։ Այժմ հարց է ծագում, արդյո՞ք Կոստանդիանոս Մեծի կամ նրա հաջորդ Կոստանցիոս կայսեր օրոք Շապուհի Բյութանիա կատարած արշավանքն է, որ Խորենացու մոտ կամ նրա աղբյուրում թյուրիմացաբար համատեղվել է Հորիանոս կայսեր Պարսկաստանից նահանջելու փաստի հետ, թե՞ իրոք, 363 թ. պատերազմի միջոցին ևս պարսից զորքը կրկին հասած է եղել Բյութանիա։ Խորենացու վկայություններից երևում է, որ Շապուհ II-ը Միջերկրեայքի վրա հարձակվել է երկու անգամ՝ հայոց Տիրան թագավորի (Գ. ԺԲ) և նրա որդի Արշակ II թագավորի Օրոք[49]։ Խորենացու այն հաղորդումը, որ 363 թ. Պարսկաստանում Հուլիանոսի կրած պարտությունից հետո, Շապուհը Հայաստանի վրա թագավորեցրեց Տիրանի որդի Արշակին և հետապնդելով հունական զորքին, հասավ մինչև Բյութանիա (Գ. ԺԷ—ԺԸ), հաստատվում է նաև նրա մեկ այլ տեղեկությամբ՝ թե Հորիանոս կայսեր հանկարծահաս վախճանից

---

48 Ամմիանոսի «Հռոմեական պատմության» գերմաներեն թարգմանիչ և մեկնաբան Վոլֆգանգ Զայֆարտը նշում է, որ պարսիկներն Անտիոքը գրավել են երկու անգամ՝ մ. թ. 256 և 260 թթ., թեև ավելացնում է, որ այդ տարեթվերը չի կարելի հավաստի համարել (Ammian. Marc., Bd. 2, S. 200, n. 105)։ Այսուամենայնիվ անհնար է կարծել, որ 361 թ. հռոմեացիների ձեռքն ընկած և Բզարղեի պաշարման ժամանակ գործի դրված պարսիկների պարսպակործան խոյը կարող էր կապ ունենալ դրանից 100 տարի առաջ՝ 256 և 260 թթ. Անտիոքի գրավման հետ։ Ուստի շատ ավելի հավանական է պարսիկների կողմից Անտիոքի պաշարումը կապել Խորենացու մոտ հիշատակված Շապուհ II-ի արշավանքի հետ դեպի Միջերկրեայք և Պաղեստին։ Գերմանացի հետազոտողին, անկասկած, հայտնի չի եղել Խորենացու Պատմության մեջ պահպանված փաստը։

49 Հուլիանոսի 363 թ. պարսկական արշավանքը Խորենացու մոտ զուգադիպում է հայոց Տիրան թագավորի գահակալության վերջին և նրա որդի Արշակ II-ի գահակալության սկզբին (Գ, ԺԷ. Գ, ԺԸ)։ Պատմաբանները Տիրանի թագավորության վերջին տարին և Արշակ II-ի թագավորության առաջին տարին գնում են 350 թ.՝ Հուլիանոսի պարսկական արշավանքից 13 տարի առաջ։ Բայց այս ժամանակագրական հակասությունը չի խանգարում մեր հետապնդած խնդրին. ավելի կարևոր է մատնանշել, որ Խորենացին և բյուզանդական հեղինակները միանգամայն համերաշխ են 363 թ. պարսկա-հռոմեական պատերազմի և դրան հաջորդող անցքերի հետ առնչվող հռոմեական կայսրերի ժամանակակցության հարցում, որ սերտ կապ ունի քննարկվող նյութի հետ։

հետո նոր կայսր հռչակված Վաղենտիանոսը (ճիշտը՝ Վաղենտինիանոս) զումարտակ է ուղարկում Միջերկրեայք և հալածում պարսից զորքը. «Եւ Յունաց թագաւորեալ Վաղենտիանոս, և գումարտակ ի Միջերկրեայս առաքեալ՝ հալածականս առնէ զզօրս Պարսից»[50]*։*

Այստեղ ևս Բյութանիան հանդիպադրվում է Միջերկբայքին. թվում է, թե այս կողմից ևս արդարանում է Խորենացու հաղորդածը, որ Շապուհի զորքն, իսկապես, կրկին հասած է եղել Բյութանիա, այսինքն՝ Միջերկրայք և Վաղենտինիանոսը հալածեց նրանց Միջերկրայքից։ Բայց խնդիրն այն է, որ նման կարծիքը հակասում է ոչ միայն պատմական իրողությանը, այլև Խորենացու աշխարհագրական ըմբռնումներին։

Իրոք, եթե 363 թ. պատերազմի ժամանակ էլ պարսիկները կրկին հասել էին պոնտական Բյութանիա, ապա ինչո՞ւ ո՛չ այդ անցքերին ժամանակակից հռոմեացի և ո՛չ էլ հետագա բյուզանդական հեղինակների երկերում հիշատակություն չկա այդ մասին։ Ամմիանոսը վկայում է միայն, որ 364 թ. ամբողջ հռոմեական աշխարհը ենթարկվեց բարբարոս ցեղերի ներխուժման. «Այդ ժամանակ գրեթե ամբողջ Հռոմեական աշխարհով մեկ հնչում էին ռազմի կոչող շեփորներ. ամենավայրագ ցեղերը խուժում էին հարևան (երկրների) սահմանները։ Նույն միջոցին ալամաններն ամայացնում էին Գալլիան և Ռետիան, իսկ սարմատներն ու քվադները՝ Պանոնիան. պիկտերն ու սաքսերը, սկոտներն ու ատտակոտները մշտական չարիքներով պատուհասում էին բրիտանացիներին. ավստորիացիները և մյուս մավր ցեղերը սովորականից ավելի կատաղի ասպատակում էին Աֆրիկան, իսկ Թրակիան կողոպտում էին գոթերի հրոսակախմբերը։

Պարսից թագավորը ձեռքը երկարեց Հայաստանին և կրկին սպառնում էր ահռելի զորությամբ, բայց և առանց իրավունքի, այն իր իշխանության տակ առնել։ Պատճառաբանելով, թե Հոբիանոսի վախճանից հետո, որի հետ նա խաղաղության դաշինք էր կնքել, ոչինչ չի կարող իրեն արգելել սեփականելու այդ երկիրը, որը, նրա ասելով, առաջ պատկանելիս է եղել իր նախնիներին»[51]*։*

Բայց Ամմիանոսի մոտ ոչ մի ակնարկ չկա այն մասին, թե 364 թ. Շապուհի զորքը ներխուժած, առավել ևս, երկար ամիսներ գրաված է եղել Բյութանիայի ծովափնյա տարածքը, որն այդ ժամանակ գտնվում էր ինքնակոչ կայսր, ապստամբ Պրոկոպիոսի իշխանության տակ[52]*։ Մյուս կողմից, ուշադիր բաղդատումը երևան է հանում Խորենացու Բյութանիայի և Փոքր Ասիայում գտնվող պոնտական Բյութանիայի միջև եղած տարբերությունը՝ ըստ Աշխարհացույցի պոնտական Բյութանիան մի ամբողջ ծովափնյա պրովինցիա է կամ երկրամաս, որտեղ գտնվում էր Նիկիա քաղաքը։ Եվ Խորենացուն քաջ հայտնի է այդ Բյութանիան, քանզի նա գիտե, որ Բյութանիայի Նիկիա քաղաքում Կոստանդիանոս Մեծը հրավիրել էր եկեղեցական առաջին տիեզերական ժողովը. «Վասն որոյ եւ հրաման յինքնակալէն Կոստանդիանոսէ՝ ժողով լինել բազմութեան եպիսկոպոսաց ի Նիկիա Բիւթանացւոց»*[53]*։*

Դրան հակառակ, Խորենացու Գ. ժԹ գլխում հիշատակված Բյութանիան, ինչպես պետք է կարծել, մի բնակավայր է, ամրացված ծովափնյա քաղաք, որ պաշարել էր Շապուհ II-ը։

Սրա հետ մեկտեղ, Խորենացու Պատմության մեջ **Միջերկրեայք** *(նաև Միջերկրայք, Մէջերկրեայք, Մէջերկրայք) գործածված է մեկ տասնյակ անգամ, և դատելով շարադրանքից, ունի աշխարհագրական միանգամայն այլ ընդգրկում*[54]*, քան VII դարի Աշխարհացույցի վերը բերված նկարագրությունը։*

---

50 ***Խորենացի***, *Գ, ժԹ, էջ 277—278։*

51 Ammianus Marcellinus, XXVI. 5—6

52 *Նույն տեղում, XXVI. 8, 7.*

53 ***Խորենացի***, *Բ. ձԹ, էջ 239։*

54 *Վիստոն եղբայրները* ***Միջերկրեայք*** *՝ամենուրեք լատիներեն բառացի թարգ-*

Հայերեն Միջերկրայք պատճենումն է հունարեն Μεσογαία, Μεσογεία և լատիներեն Mediterranea բառերի, որոնք սկզբնապես գործածվում էին իբրև հասարակ գոյական՝ «ներքին երկիր, երկրի ներքին մասը» իմաստով[55], ճիշտ այնպես, ինչպես Փավստոս Բուզանդի մոտ՝ Միջնաշխարհ, Մէջ-աշխարհ: Մ. թ. III դարից Հունական ծովը լատին աղբյուրներում սկսեցին անվանել Mare Mediterraneum[56]—Միջերկրական ծով:

Ինչպես ասվեց, Աշխարհացույցում Միջերկրայքը Անատոլիա կամ Ասիա թերակղզին է. «Ընդ մէջ Յունաց ծովուն եւ Պոնտոսի», որի ավելի հին ձևակերպումը գտնում ենք Խորենացու մոտ—«զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտուն և զՕվկիանու» (երկու մեծամեծ ծովերի՝ Պոնտոսի և Օվկիանոսի միջակա տարածքը)[57]:

Բայց հակառակ Աշխարհացույցի Խորենացին Միջերկրեայք անվան տակ նկատի ունի ոչ միայն Անատոլիա թերակղզին, այլ նաև Ասորիքը[58], այսինքն՝ Միջերկրական ծովի արևելյան ափը մինչև Պաղեստին: Մեզ անհրաժեշտ է հավաստի վկայություններով հաստատել աշխարհագրական այս նոր իրողությունը, որ տարբեր է Աշխարհացույցի ունեցած պատկերացումից:

Խորենացին հաղորդում է, որ Հռոմեական կայսրն ամբողջ Միջերկրեայքը վստահեց Հրեաստանի Հերովդես թագավորին, որն էլ Միջերկրեայքի թագավոր կարգեց իր որդի Աղեքսանդրի աներոջը[59]. «Իսկ կայսրն ոչ միայն զԱրշամ չազատէ յիշխանութենէն Հերովդի, այլ և զամենայն Միջերկրեայս նմա հաւատայ: Յայնմ ժամանակի Հերովդէս զաներ Աղեքսանդրի որդւոյ իւրոյ [...] ընդ իւրով ձեռամբ թագաւոր Միջերկրեայցն կացուցանէր, առեալ իւր ի սպասաւորութիւն գունդ ի Գաղատացւոց և ի Պոնտացւոց»[60]:

Պարզ է, որ այստեղ ևս Միջերկրեայքը չի կարող ընդգրկել սոսկ Անատոլիա թերակղզին, քանի որ Հռոմի կայսրը չէր կարող Հրեաստանի Հերովդես թագավորին հանձնել Անատոլիան՝ զանց առնելով նրանց միջև ընկած Ասորիքը: Դրա հաստատումը գտնում ենք եբրայեցի պատմագիր Հովսեպոս Փլաբիոսի պատմական երկերում, որոնցից, ինչպես ցույց է տալիս բնագրերի բաղդատումը, Խորենացին քաղել է վերոհիշյալ տեղեկությունը: Հով-

---

մանել են Mediterranea. Ռ. Թոմսոնը Խորենացու անգլերեն թարգմանության մեջ Միջերկրեայք ներկայացնում է տարբեր տերմիններով—Anatolia (Ա, ը, Բ, իե երկու անգամ Գ, ժթ), Asia minor (Բ, ժե), Mediterranean regions (Բ, կդ երկու անգամ), Mediterranean, Mediterranean Lands (Գ, ժը):

55 Այդ նշանակությամբ էլ Μεσογαία գործածում է Ստրաբոնը՝ Geographica, II. 5, 31; XII. I, 3:

56 C. Julii Solini Collectanea rerum memorabilium iterum recensuit, Berolina 1895 (22, 18). Ենթադրվում է, որ Հուլիոս Սոլինուսը II կամ ոչ ուշ քան III դարի հեթանոս իսպանացի հեղինակ է, որի աշխատության հատվածները պահպանվել են նշանավոր մատենագիր, Սեվիլիայի եպիսկոպոս Իսիդոր Իսպանացու (570—636) 20 հատորանոց հանրագիտարանում՝ Isidorus Hispaiensis. Originum seu Etymologiarum libri XX (13. 16) (Corpus graminaticorum, Leipzig, 1833).

57 Խորենացի, Ա, ժդ, էջ 46. Ովկիանոս=Յունաց ծով—Միջերկրական ծովի հնադույն անուններն են հայ մատենագրության մեջ:

58 Ասորիք—ըստ Աշխարհացույցի ընդհանուր Ասիայի 23-րդ աշխարհը, որ ձգվում է համանուն Ասորական ծովի արևելյան ափով՝ Կիլիկիայի դռներից (Հյուսիսում) մինչև Հրեաստան (հարավում), իսկ արևելքից հասնում է մինչև Եփրատի շրջադարձը (էջ 35): Միջերկրական ծովի արևելյան կողմը, որ հարում է Ասորիքին, Ստրաբոնն անվանում է Ասորական ծով:

59 Ըստ Հովսեպոս Փլաբիոսի Աղեքսանդրն ամուսնացած էր Կապադովկիայի թագավոր Արքելաոսի դստեր՝ Գլաֆիրայի հետ—Flavii Josephi Antiquitatum judaicarum. Parisiis. 1845 (XVI 8, 6); Idem: De Bello judaico. Parisiis. 1847 (I. 25. 6). Հովսեպոս Փլավիոս, թարգմանություն բնագրից Ս. Մ. Կրկյաշարյանի. Երևան, 1976, էջ 42:

60 Խորենացի, Բ, իե, էջ 142:

սեպոսը վկայում է, որ Օգոստոս Կեսարը[61] Հերովդեսին պարգևեց Զենոդորոս իշխանից խլած Տրաքոն (Trachon, Trachonitis) երկիրը, որ ավազակները Զենոդորոսի թողտվությամբ դարձրել էին իրենց հանգրվան՝ հարևան դամասկացիների գավառն ասպատակելու համար[62], իսկ Զենոդորոսի մահից հետո Կեսարը Հերովդեսին պարգևեց նաև Զենոդորոսին պատկանող այն տարածքը, որ գտնվում էր Տրաքոնի և Գալիլեայի միջև՝ ներառյալ Ուլաթա, Պանիադա[63] և դրանց սահմանակից գավառները, իսկ Հերովդեսին կարգեց ամբողջ Ասորիքի հոգաբարձու (totius Syriae Herodem procuratorem constituit) և նրա իշխանությանը ենթարկեց Ասորիքի կառավարիչներին, որոնց նա հանձնարարեց միայն Հերովդեսի խորհրդով կառավարել երկիրը[64]։ Այստեղից պարզվում է, որ հենց Հովսեպոսի այս հաղորդումն աչքի առաջ ունի Խորենացին, ասելով, թե կայսրը Հերովդեսին վստահեց ամբողջ Միջերկրեայքը. «Զամենայն Միջերկրեայս նմա հավատա» հմմտ. «Զնա ամենայն ասորւոց հոգաբարձու կացոյց»։ Որից և երևում է, որ Խորենացին Միջերկրեայք[65] անվան տակ հասկանում է նաև Ասորիքը։

---

[61] Հուն. բնագրում՝ Καῖσαρ, լատ.՝ Caesar. Խորենացու մոտ (Բ, իե)՝ կայսր (առանց անունը հիշատակելու)—խոսքը հռոմեական կայսր Օկտավիանոս Օգոստոսի մասին է (մ. թ. ա. 42—մ. թ. 14)։

[62] Flavii Josephi Antiquitatum judaicarum XV. 10, 1; Idem: De Bello judaico. I. 20 (15). 4.

[63] Ըստ Աշխարհացույցի Պանիադան գտնվում էր Ասորիքում, որտեղ բխում էին Հորդանան գետի աղբյուրները. «Յորդանան որ ելեալ ի Պանիադայ՝ մտանէ ի Գալիլիացւոց ծովն» (Աշխարհացոյց, էջ 36)։ Հովսեպոսից տեղեկանում ենք, թե Հերովդես թագավորը ի նշան երախտագիտության մի շքեղ տաճար կառուցեց Կեսարի պատվին Զենոդորոսի երկրում՝ Պանիոն կոչված վայրում, որտեղ լեռան տակից բխում էին Հորդանան գետի աղբյուրները (Flavii Josephi Antiquitatum judaicarum XV. 10, 3).

[64] Flavii Josephi De bello judaico, I. 20 (15), 4—հայերեն թարգմանությունը լատիներենից Ստեփաննոս Լեհացու (1660 թ.). «Կայսր [...] զնա [զՀերովդէս] ամենայն ասորւոց հոգաբարձու կացոյց։ Եւ իբրև միւսանգամ դարձաւ ի գաւառն այն կայսր տասներորդ յամի թագաւորութեան, պատուէր յետ գործակալաց հռովմայեցւոց, զի մի՛ ինչ առանց խորհրդոյ Հերովդի համարձակեսցին առնել. և ետ մահուան Զենոդորոսի զամենայն երկիրն որ է ի մէջ տրաքոնացւոց և գալիլեացւոց ի նա հաւատաց» (Պատմագիրք արարեալ Յովսեպոսի եբրայեցւոյ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռոմայեցիս և աւերմանն Երուսաղէմի և Տաճարին նորոյ (Ա, ժե), Էջմիածին, 1787, էջ 75)։ Հմմտ. նաև Flavii Josephi Antiquitatum judaicarum XV. 10, 3— հայերեն թարգմանությունը իտալերենից Ա. Տայիսիմոնյանի (1760—61). «Այլ Սենոդորոս վայթմամբ որովայնին, և հեղմամբ բաղում արեան մեռաւ յԱնտիոք Ասորեստանեայց և շնորհեաց կայսրն Հերովդեի զմեծ մասն յընչից նորա, որ էր ի մէջ տրօգոնացւոց, և Գալիլեայ. այսինքն զՈւլադա և զԹանեոգա և զերկիրն շուրջանակի։ Եւ եթող զնա զնալ, և հրամաեաց դատաւորացն Ասորւոց, զի խորհրդովն նորա արասցեն զկառավարութիւն» (Գիրք մատենի Հնագոյն Պատմութեանց։ Շարադրեալ և արարեալ ի Յովսեպոսէ Փլափիանոսէ Եբրայեցւոյ, յԱմէնիմաստ Պատմչէ (գիրք ժե, գլ, ժգ) տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2747, էջ 566)։

[65] Հովսեպոս Փլաբիոսին հայտնի չէ Միջերկրեայք իբրև որոշակի աշխարհագրական տարածքի հատուկ անուն։ Նրա «Պատերազմ Հրէից» գրքում Μεσογεία (միջերկրեայք) հանդիպում է միայն բառի սկզբնական՝ «երկրի ներքին մասը» նշանակությամբ (տե՛ս մեր 220 էջը և 55 ծանոթագրությունը)։ «Այլև զմիջերկրեայ քաղաքսն՝ որք ո՛չ էին կործանեալ, յիշխանութենէն Հրէից ազատեաց (Պոմպեոս—Ա. Մ.). զՀիպպոն, զՍկիւթոպօլիս, զՊեղա, զՍամարիա, զՄարիսա, զԱզովտոս, զԵամնի, և զԱրեթուս։ Նա՛և զծովեզերեայս՝ զԳազա, զՅոպպէ, զԴովրա, և զԱշտարակն Ստրատոնեան, որ յետոյ երևելի շինուածովք հրաշակերտեալ ի Հերովդէէ արքայէն, Կեսարիա՛ անուանեցաւ. զա՛յս ամենայն քաղաքս յիւրեանց բնակիչսն դարձուցեալ ընդ գաւազանաւ Ասորւոց կացոյց (Յովսեպոս՝ Յաղագս պատերազմին Հրէից, Վաղարշապատ, 1787, Ա, ե, էջ 34)։ Այստեղ Հովսեպոսը Միջերկրեայք անվան տակ նկատի ունի Հրեաստանի ներքին մասը, որը հակադրում է ծովեզերքին, իսկ դա ցույց է

Զնայած Պաղեստինը նույնպես գտնվում էր Միջերկրական ծովի արևելյան ափին և հյուսիսից սահմանակից էր Ասորիքին, բայց և այնպես Խորենացին Պաղեստինը պարզորոշ սահմանազատում է Միջերկրեայքից։ Դա ակնհայտ երևում է Պատմահոր այն խոսքից, թե՝ «Եւ զայլ յոլով թագաւորս նուաճեալ Շապհոյ, և զազգս բարբարոսաց բազումս ի սատարութիւն կալեալ՝ յարձակեցաւ ի Միջերկրեայս և ի Պաղեստինէ»[66]։

Վերոհիշյալից բխող կարևոր հետևությունն այն է, որ երբ Խորենացին ասում է, թե Վաղենտինիանոսը զորքի գումարտակ ուղարկեց Միջերկրեայք՝ պարսկական զորքը հալածելու, ապա դա մտածել է տալիս, որ Պատմահայրը այդ անվան տակ Անատոլիայի հետ միասին նկատի ունի և Ասորիքը։ Մեր այս եզրակացությունը լիովին հաստատվում է VI դարի հեղինակ Մալալայի հունարեն ժամանակագրության տվյալներով։ Մալալան հաղորդում է. «Վաղենտինիանոս կայսրը բազում գործեր ձեռնարկեց Ավագ Անտիոքում։ Նա պատերազմ սկսեց պարսիկների դեմ, (նրանց վրա) ուղարկելով իր Վաղես եղբորը, որին կեսար էր նշանակել ապրիլ ամսի 1-ին։ Բայց Վաղեսը ճակատամարտ չտվեց, այլ տեղ հասնելուն պես ձեռնարկեց խաղաղության դաշինքի, քանի որ անձամբ եղբոր կողմից լիազորություն էր ստացել դրա համար, եթե այստեղ հասած պարսիկները հաշտություն խնդրեին։

Այսպես, Վաղեսն այս զորքի բազմության հետ նոյեմբեր ամսի 10-ին, ինդիկտիոնի 14-րդ տարում Ասորիքի Անտիոք հասնելով, այնտեղ սկսեց բանակցել պարսիկների հետ խաղաղության պայմանագրի մասին և պայմանագիր կնքեց յոթ տարով, քանի որ պարսիկները հաշտություն խնդրեցին և նահանջեցին մինչև Մծբինի կեսը»[67]։

Ի մի բերելով Խորենացու և Մալալայի հաղորդած տվյալները, համոզվում ենք, որ դրանք վերաբերում են միևնույն պատմական դեպքին.

ա) Երկու հեղինակների. մոտ էլ Վաղենտինիանոսը 364 թ. թագավոր դառնալուց հետո, զորք է ուղարկում պարսիկների դեմ։ Մալալայի χώρα τῶν Περσῶν արտահայտությունն այլ բան չ'ի նշանակում, քանի որ պարսիկները մինչ այդ արդեն իջել էին Անտիոք։

բ) Խորենացու Միջերկրեայքը դարձյալ հանդիպադրվում է Ասորիք անվանը[63].

գ) Երկուսի մոտ էլ հռոմեացիները ետ են վանում պարսկական զորքը, Մալալան ավելի որոշակի է ասում՝ պարսիկները նահանջեցին մինչև Մծբին։

Իսկ թե պարսիկներն ինչո՞ւ համաձայնեցին առանց ճակատամարտի հեռանալ Ասորիքից, դրա բացատրությունը գտնում ենք Խորենացու մոտ՝ այդ ընթացքում հյուսիսային ազգերը խռովություն բարձրացրին Շապուհ արքայի դեմ. իսկ Վաղենտինիանոսը, հույների վրա թագավորելով, օգտվեց նրանից, որ Շապուհը զբաղված է հյուսիսային ազգերի դեմ կռվելով, մի գումարտակ ուղարկեց Ասորիք և հալածեց այնտեղից պարսկական զորքը[69]։

Համանման տեղեկություններ հաղորդում են նաև V դարի առաջին կեսի եկեղեցական պատմիչներ Սոկրատ Սքոլաստիկոսը և Սոզոմենոսը, որոնք

տալիս, որ մ. թ. I դարում Միջերկրական ծովի առափնյա երկրները Միջերկրեայք չէին կոչվում։

66 Խորենացի, Գ, ժը, էջ 270։

67 Johannis Malalae Chronographia. Liber XIII, p. 338 (Migne, Patrologiae graecae. Tomus 97, col. 504, 505)

68 Գր. Խալաթյանցը փորձում է ապացուցել, թե այստեղ ևս Խորենացու հաղորդումը պատմական հիմք չունի, մատնանշելով, թե իբր Սոկրատը և Մալալան «խոսում են միայն խաղաղության պայմանագիրը նորոգելու, այլ ոչ պարսից դեմ պատերազմելու և նրանց պարտության մասին» (Г. Халатьянц. Армянские Аршакиды, с. 237). Խորենացու և Մալալայի այս համարժեք տեղեկություններն արդյունք են ոչ թե այն բանի, որ Խորենացին որպես «ուշ շրջանի հեղինակ» օգտվել է Մալալայից, այլ այդ երկու հեղինակները օգտվել են այնպիսի սկզբնաղբյուրներից, որոնք պարունակել են միանման տեղեկություններ։

69 Խորենացի, Գ, ժթ, էջ 278։

նույնպես վկայում են, որ Վաղեսի Անտիոք գնալը, իրոք, կապված է եղել պարսիկների նոր հարձակման սպառնալիքի հետ։ Սոկրատի «Եկեղեցական պատմության» մեջ կարդում ենք. «Վաղեսն անհապաղ Ասորիքի Անտիոք (քաղաքը) մեկնեց, երկյուղ կրելով, թե միգուցե պարսիկները Հոբիանոսի հետ կնքած Երեսնամյա դաշինքը լուծելով՝ ներխուժեն հռոմեական սահմանները, բայց պարսիկները լուռ էին, իսկ նա խաղաղության հանդիպելով, համագոյակների (ուղղափառների—Ա. Մ.) դեմ պիղծ պատերազմ սկսեց»[70]։

Նույն առիթով Սոզոմենոսը հաղորդում է. «Այնուհետև (Վաղես կայսրը) իջավ Ասորիք. երկյուղ ուներ, թե չլինի պարսիկները լուծեն Հոբիանոսի հետ կնքած Երեսնամյա դաշինքը։ Ուստի նրանց նոր ոտնձգությունների (դեմն առնելու) համար, բանակ դրեց Անտիոքում»[71]։

Ինչպես տեսնում ենք, երեք բյուզանդական հեղինակներն էլ՝ Սոկրատը, Սոզոմենոսը և Մալալան կայսր կամ կեսար Վաղեսի Ասորոց Անտիոք գնալը կապում են միմիայն պարսիկների հարձակման սպառնալիքի հետ, որից և միանշանակ կարելի է եզրակացնել, թե 364 թ. պարսից զորքը կանգնած է եղել Ասորեքում՝ Անտիոքի մոտերքում։

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Խորենացին և բյուզանդական հեղինակները փոխադարձաբար հաստատում և լրացնում են միմյանց՝ Վաղենտինիանոս կայսրը, պատերազմ հայտարարելով պարսիկներին, իր եղբայր Վաղեսին ուղարկեց նրանց դեմ՝ Ասորիքի Անտիոք քաղաքը, բայց գործը ճակատամարտի չհասավ, քանի որ հյուսիսային ցեղերի բարձրացրած խռովության պատճառով, պարսիկները համաձայնեցին չեղյալ համարել Հոբիանոսին պարտադրած «Երեսնամյա դաշինքը» և Վաղեսի հետ կնքեցին նոր յոթնամյա պայմանագիր։ Ահա թե ինչու պարսիկները ստիպված եղան հրաժարվել իրենց նվաճած տարածքների մի մասից և Ասորիքի Անտիոք քաղաքից նահանջեցին մինչև Մծբին։ Դա նույն Ավագ Անտիոքն է, որ գտնվում է Որոնտես գետի ափին[72]՝ Միջերկրական ծովի առափնյա տարածքում[73]։ Այստեղ էլ, Միջերկրյա Ասորիքում, ցույց է տալիս Խորենացին պարսից զորքի գտնված վայրը, որտեղից Վաղենտինիանոսի ուղարկած հռոմեական գումարտակը հալածեց նրանց։

---

70 Socratis Scholastici Historia ecclesiastica' IV, 2 (Migne, t. 67, col. 465). Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն. Վաղարշապատ, 1897, գիրք չորրորդ, գլ. Բ, էջ 297, 298՝ «Իսկ Վաղէս վաղվաղակի յԱնտիոքայ Ասորոց գնացեալ, կասկածեալ զի մի Պարսիցն զեղեալն դաշինս երեսուն ամի առ Յովիանոսիւ լուծեալ ի Հռովմայեցւոցն ելցեն յաշխարհ այլ Պարսկական լռէր։ Իսկ նորա խաղաղութեանն հպեալ, համագոյութեանն խորհողաց զաննուէրն յարոյց պատերազմ»։ Սոկրատի միտքն այն է, թե արիոսական աղանդով վարակված Վաղեսն այս խաղաղությունից օգտվելով՝ պատերազմ սկսեց ուղղափառ եպիսկոպոսների դեմ։

71 Hermiae Sozomeni Ecclesiastica historia, VI, 7 (Migne. Patrologiae graecae, t. 67. col. 1313, p. 228).

72 Τὴν παρὰ Ὀρόντῃ Ἀντιόχειαν (Sozom—VII, 13). Որոնտես գետի անունը Աշխարհացույցում աղավաղված է. «զՈռէնտիս, որ բղխէ ի Լիբանանէ, անցանելով առ Եպիփանով, մտանէ ի ծով՝ հուպ յԱւագն Անտիոք» (էջ 36)։ Քաղաքն Ավագ Անտիոք էր կոչվում Պիսիդիայի և մյուս Անտիոքներից զանազանելու համար։

73 Ասորիքի այդ մասը հույն աշխարհագետ Ստրաբոնն անվանում է Սելևկիս (Σελευκὶς) ἢ Τετράπολις (քառաքաղաք)՝ այն նշանավոր չորս քաղաքներով, որ հիմնել էր Սելևկոս Նիկատորը (մ. թ. ա. 358—280) և կոչել հոր, իր, կնոջ և մոր անուններով՝ Անտիոք (Դափնեի մոտ), Սելևկիա, Ապամեա, Լաոդիկեա (Լաւոդիկէ) (XVI. 2, 4)։ Աշխարհացույցը հիշատակում է Սելևկիան որպես Ասորիքի ինը աշխարհներից մեկը՝ «Ավագ Անտիոք իւր զառուցեալ աշխարհաւն, որ կոչի Սելեւկիա» (էջ 35)։ Հիերոկլեսի «Սինեկդեմոս»-ում Ասորիք առաջին նահանգի մեջ (Ἐπαρχία Συρίας α') մտնում էին հետևյալ քաղաքները՝ Անտիոք(իա) (Դափնեի մոտ), Լավոդիկեա, Գաբալա, Պալտոս, Բերոիյա, Խալկիաս (Hieroclis Synecdemus, Lipsiae, 1893, p. 39)։

Արդեն իսկ աշխարհագրական այս նոր իրողությունը մտածել է տալիս, որ Խորենացու Պատմության մեջ 363 թ. պարսկա-հռոմեական պատերազմի կապակցությամբ խոսք չի կարող լինել Շապուհի Բյութանիա հասնելու մասին։ Եվ իրոք, եթե Շապուհի զորքը հասած լիներ Բյութանիա, ապա պարսից զորքը պետք է կանգնած լիներ Եվքսինյան Բոսփորի ափին, այլ ոչ թե Միջերկրական ծովի։

Խորենացու Բյութանիան պետք է որոնել ոչ թե այնտեղ, ուր մատնացույց են անում նրա ընդդիմախոսները, այլ Միջերկրական ծովի ափին։

Մեր հետագա քննությունը ցույց տվեց, որ այս դեպքում ևս իրավացին Պատմահայրն է. պարզվում է, որ մեր թվարկության առաջին դարերում Ասորիքում, Անտիոք քաղաքից ոչ հեռու, Միջերկրական ծովի ափին գոյություն ուներ մի հռոմեական զորակայան և նավահանգիստ—այն կոչվում էր Բիթիլիա կամ Բիթյուլիա, որ գրեթե նույնահնչուն է Բյութանիա անվանը, մանավանդ եթե նկատի ունենանք վերջինիս հունարեն՝ Βιθυνία և լատիներեն՝ Bithynia (Բիթյունիա) ձևը։ Մեր կարծիքով Խորենացու Պատմության մեջ սկզբնապես եղել է հենց Բիթյուլիա, որ արտագրող գրիչները համարել են ձեռագրական աղավաղում և «ուղղել» են ծանոթ ձևով՝ Բիթյունիա (որն էլ հետագայում դարձել է Բյութանիա) և այսպիսով Խորենացու Բիթիլիան Միջերկրականի ափից տեղափոխվել է Եվքսինյան Բոսփորի ափը։

Այս անհայտ Բիթիլիա քաղաքի և նրա տեղադրման մասին տեղեկություն է տալիս Դոմնինոս (կամ Դոմինոս) ժամանակագիրը[74]՝ Հռոմի կայսր Տրայանոսի (98—117) և պարսից Սանատրուկ թագավորի միջև տեղի ունեցած պատերազմի առիթով։ Ուրեմն Դոմնինոսի հաղորդած տեղեկությունը Բիթիլիայի մասին վերաբերում է մ. թ. II դարի սկզբին՝ «Իսկ պարսից թագավոր Սանատրուկ(իոս)ը ձգտում էր ավերել հռոմեացիների երկիրը։ Հայոց թագավոր Օսդրոեսը[75] Մեերդոտեսի (Միհրդատ) եղբայրը վերջինիս մահվան լուրն առնելով, իր հարազատ որդուն՝ Պարթամասպատին բուն Հայաստանից մեծ զորքով անմիջապես ուղարկեց հռոմեացիների դեմ, իր հորեղբոր որդուն՝ պարսից թագավոր Սանատրուկիոսին օգնելու։ Այս լսելով, աստվածային Տրայանոս կայսրն անմիջապես պատերազմի պատրաստվեց և իր թագավորության տասներկուերորդ տարվա (մ. թ. 110 թ.—Ա. Մ.) հոկտեմբերին ելնելով Հռոմից՝ նախ նավելով հասավ Անատոլիա (արևելք), ապա զորքի մեծ բազմությամբ... դեկտեմբերին ճեպանավերով ժամանեց Ասորիքի Սելևկիա՝ խարիսխ ձգելով Բիթիլիա[76] կոչված խարսխակայանում, որն

---

74 Դոմինինոսի «ժամանակագրությունը» սկզբնաղբյուր է ծառայել Մալալայի համար. ուրեմն նա շատ ավելի հին է և ժամանակով ավելի մոտ է կանգնած իր նկարագրած պատմական դեպքերին, քան VI դարի հեղինակ Մալալան, որն իր «ժամանակագրության» մեջ բազմիցս հիշատակում է Դոմ(ն)ինոսին։

75 Օսդրոես—Դիոն Կասիոսի մոտ՝ (LXVIII, 19.4) Օսրոես—Խոսրով, հակառակ Մալալայի, համարվում է պարթևների թագավոր (110—130), Բակուր II-ի հաջորդը (Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Բ, մասն Ա, Երևան 1957, էջ 20)։ Ակադ. Հ. Մանանդյանը Մալալայի տեղեկությունները համարելով խառնաշփոթ, նշված դեպքերի առիթով եզրակացնում է. «Շուտով Տրայանոսի թիկունքում սկսվեցին ապըստամբություններ և՛ Ադիաբենում, և՛ Միջագետքում, և՛ Հայաստանում։ Հռոմեական պահապան զորքերը շատ տեղերում կամ շարդվեցին և կամ վտարվեցին։ Ապստամբության գլուխ էր կանգնել պարթևական թագի թեկնածուներից մեկը, Միհրդատ Զ-ը, որը Խոսրով թագավորի եղբայրն էր։ Սա վերագրավեց ամբողջ Միջագետքը և արշավեց մինչև Կոմագենե, սակայն այս արշավանքի ժամանակ ձիուց վայր ընկավ և մեռավ (116 թվին)։ Միհրդատ Զ-ին հաջորդեց իր որդին՝ Սանատրուկը, որին օգնության հասավ Հայաստանից ուղարկված զորքը Խոսրովի որդու՝ Պարթամասպատի առաջնորդությամբ» (Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 29. տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն. հ. I, Երևան, 1971, էջ 775)։

76 Մոտ 530 թ. Հիերոկլեսի կազմած «Սինեկդեմոս» կոչված գավառացանկում գտնում ենք Βιτύλη (Բիթյուլե), իսկ Գեորգ Կիպրացու մոտ (VII դար)՝ Βιττύλιος (Բիթտյուլիոս)

իսկական բնական նավահանգիստ է Ասորիքի Սելևկիայի մոտ (ἀπὸ τοῦ λεγομένου Βοτωλίου ὁρμητηρίου, ὄντος αὐτοφυοῦς λιμένος πλησίον Σελευκείας τῆς Συρίας). Բայց նախքան կայսրը տեղ կհասներ, պարսիկները գրավելով Ավագ Անտիոքը, այն հայտարարեցին իրենց թագավորինը և տեր դարձան նրան ոչ թե պատերազմով, այլ փոխադարձ համաձայնությամբ[77]։

Բերված հատվածից հեշտ է տեսնել, որ Տրայանոս կայսեր և Սանասարուկ թագավորի օրոք հռոմեացիների և պարսիկների միջև պատերազմական գործողությունները տեղի են ունեցել աշխարհագրական նույն շրջանում, ինչ որ Վալենտինիանոսի և Շապուհ II-ի ժամանակ՝ Ավագ Անտիոք-Սելևկիա-Բիթիլիա (Բյութանիա)[78]։

Փավստոսի և Մալալայի վկայություններից արդեն տեսանք (էջ 213), որ պարսիկները 363 թ. տիրեցին ամբողջ Ասորական Միջագետքին, ուստի միանգամայն տրամաբանական է կարծել, որ դրանից հետո նրանք անցան Եփրատ գետը[79] և սպառնացին Ասորիքի Անտիոք քաղաքին ու ծովափնյա Բիթիլիա նավահանգստին։ Այնպես որ Խորենացու տեղեկությունը լիովին համընկնում է հույն հեղինակների հաղորդածին՝ այն տարբերությամբ միայն, որ Սոկրատը, Սոզոմենոսը և Մալալան պարսից զորքի գտնված վայրը Ասորիքում հիշատակում են Անտիոք քաղաքի, իսկ Խորենացին՝ Անտիոքին հարևան ծովափնյա Բիթիլիայի անունով։

Դոմնինոսի և Խորենացու հիշատակած քաղաքների նույնությունը հաստատվում է ոչ միայն անունների նմանաձայնությամբ, այլև նրանով, որ դրանք երկուսն էլ գտնվելիս են եղել հենց ծովափին։

Խորենացու այն արտահայտությունը, թե «(Շապուհ) հասեալ ի Բիւթանիա, և նստէր ամիսս յոլովս։ Եւ ոչ ինչ կարացեալ առնել», այժմ ավելի պարզ ու հասկանալի իմաստ է ստանում. Շապուհ II-ը երկար ամիսներ պաշարում է Բիթիլիան, Դոմնինոսի վկայությամբ հռոմեացիների այդ իսկական բնական նավահանգիստն ու խարսխակայանը (մեզ ծանոթ Բյութանիան մի ամբողջ երկրամաս է, որ հնարավոր չէր պաշարել), բայց չկարո-

---

քաղաքը, որը թեև նմանահնչուն է մեր ցույց տված Բիթիլիային, բայց գտնվում է Առաջին Պաղեստին եպարքիայում՝ Գազա և այլ քաղաքների հետ միասին (Hieroclis Synecdemus Lipsiae, 1893, p. 41. Georgii Cypri Descriptio Romani. Lipsiae, 1890, p. 52). Այդ նույն քաղաքի անունը հիշատակում է և Սոզոմենոսը «Եկեղեցական պատմության» մեջ, դարձյալ Գազայի շրջանում Βοτωλίου (Botolii) աղավաղված ձևով (Hermiae Sozomeni Historia ecclesiastica, Lib. VII, cap. 28, p. 321—Migne, t. 28, col. 1505), որը գրքի հունարեն անվանացանկում նշված է Βοτωλίου։ Ա. Հ. Մ. Ջոնսը Սոզոմենոսի մոտ հիշատակված այդ տեղանունն ուղղում է՝ Bittylius (A. H. M. Jones. The cities of the eastern Roman provinces. Oxford. 1971, p. 280). որը սակայն ոչ մի կապ չունի մեր ցույց տված Բիթիլիայի հետ։ Ցավոք, պատմական աշխարհագրության այնպիսի նշանավոր հետազոտողներ, ինչպես Վ. Տոմաշեկը (Wilhelm Tomaschek. Zur historischen Topographie von Kleinasien im Mittelalter. VIII Abteilung. Wien, 1891) և Է. Հոնիգմանը (Ernst Honigmann. Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071. Bruxelles, 1935). որոնք մանրակրկիտ ուսումնասիրություններ են նվիրել Միջերկրածովյան ավազանի բնակավայրերին, չեն հիշատակում Բիթիլիա տեղանունը։

77 Johannis Malalae Chronographia. Vol. 2, Lib. XI, p. 270—271 (Migne, t. 97 col. 509)

78 Ըստ Ստրաբոնի Սելևկիա քաղաքը, որ նույնպես Որոնտես գետի ափին էր, Անտիոքից գտնվում էր 120 ստադիոն հեռավորության վրա, իսկ Որոնտեսի գետաբերանից, այսինքն ծովից՝ 40 ստադիոն (շուրջ 7 կմ, ատտիկյան ստադիոնը հավասար է 177,6 մետրի)։ Ստրաբոնը նշում է, որ ծովից մինչև Անտիոք ոտքով մեկ օրվա ճանապարհ էր՝ Որոնտես գետի հոսանքով դեպի վեր (Strabo, XVI. 2,7)։ Քանի որ ըստ Դոմնինոսի, Բիթիլիան գտնվում էր Սելևկիայի մոտերքում՝ ծովափին, ապա նրանց միջև եղած հեռավորությունը ևս պետք է կազմեր գրեթե 40 ստադիոն։

79 «Եփրատ բաժանէ ի Միջագետաց զԱսորիս» (Աշխարհացույց, էջ 37)։

դանալով գրավել քաղաքը, ծովի մոտ կանգնեցնում է հաղթական առյուծի կոթողը, որ խոսուն կերպով խորհրդանշում էր մինչ այդ պարսիկների հետ հռոմեացիների կնքած «ամոթալի պայմանագիրը»։

XVIII դարի ֆրանսիացի պատմաբան Շարլ Լեբոն (1701—1778) «Բյուզանդական կայսրության պատմություն» բազմահատոր աշխատության մեջ, վաղ բյուզանդական մատենագրական ավանդության հիման վրա ներկայացնելով Հուլիանոսի փայլուն հաղթանակները Պարսկաստանում, գրում է. «Պարսիկները երկար ժամանակ Հուլիանոսի հաղթանակների թողած սարսափները արտահայտում էին ազգու խորհրդանիշներով։ Այդ սարշավ նվաճողին ներկայացնելու համար, նրանք սովորություն ունեին պատկերել շանթ կամ առյուծ, որից բոց էր ժայթքում, և վրան ավելացնում էին Հուլիանոս անունը»[80]։ Այս ավանդությունը բաղդատելով Խորենացու հաղորդած տեղեկության հետ, համոզվում ենք, որ հիմնական կետում նրանք հաստատում են իրար, այն է՝ 363 թ. Հուլիանոսի Պարսկաստան կատարած արշավանքի առթիվ պարսիկները քանդակել կամ պատկերել են առյուծ։ Տարբերությունը միայն մեկնաբանման մեջ է—Խորենացին առյուծը համարում է Շապուհի հաղթության, պարսից արքայի հզորության խորհրդանիշ, մինչդեռ բյուզանդական ավանդության մեջ սարսափահար պարսիկները առյուծի կերպարանքով ներկայացրել են իրենց ահեղ թշնամուն՝ Հուլիանոսին։ Վերջին բացատրությունն ակնհայտ շինծու է և անբնական, որովհետև այդ աեեղ թշնամուն էր, որ պարսիկներն իրենք ծանր պարտության մատնեցին և պարտադրեցին «ամոթալի պայմանագիրը»։ Բացի այդ, Հուլիանոսի Պարսկաստան ներխուժելու և հռոմեացիների պարտության միջև այնքան քիչ օրեր էին անցել, որ պարսիկների կրած «սարսափը» չէր կարող ինքնանվաստացման այդպիսի կերպավորում ստանալ։ Մնում է կարծել, որ 364/5 թ. Վաղեսի հետ կնքած յոթնամյա պայմանագրից հետո, երբ պարսից զորքը հետ քաշվեց մինչև Մծբին, Բիթիլիայի ծովափին Շապուհի կանգնեցրած առյուծի հուշասյունը մնաց հռոմեացիների տիրապետության տակ, որի վրա հույներն ավելացրին Հուլիանոսի անունը (այսպես էլ ասված է Լեբոյի մոտ) և ըստ այսմ էլ այն ներկայացրին իբրև Հուլիանոսի «հաղթության» խորհրդանիշ։ Խորենացու ներկայացրած առյուծն ու մատյանը իբրև հաղթող Պարսկաստանի և հաղթված Հռոմի խորհրդանիշներ շատ ավելի համոզիչ են և տրամաբանական, քան հետին թվով վերիմաստավորված բյուզանդական ավանդությունը։ Տարօրինակ է, որ Գր. Խալաթյանցն այստեղ ևս, Խորենացու վկայությունը Շապուհի կանգնեցրած առյուծի մասին, համարում է ուշ շրջանի արդյունք, թեև չի ժխտում, որ «մինչև այժմ էլ պարսիկների մոտ առյուծն ընդունված է որպես Պարսկաստանի հզորության խորհրդանիշ»[81]։

Ո՞ր աղբյուրից է օգտվել Խորենացին քննարկված դրվագում. հարցի պատասխանը տալիս է ինքը՝ Պատմահայրը ոչ այս դեպքերի առիթով, այլ Իրանի Արշակունյաց թագավորական տոհմից երեք պահապիկ ցեղերի բաժանման մասին պատմելիս։ Նա հարևանցի հիշատակում է պատմագիր Եղիազարին, որն իր մատյանում շարադրել էր Շապուհ II-ի և Հուլիանոսի ժամանակ տեղի ունեցած անցքերը, որոնց և ինքն ականատես էր եղել։ Պատմահայրը հաղորդում է նրա անձի մասին որոշ կենսագրական տվյալներ՝ նա ազգով պարսիկ էր, անունը Խոռոհբուտ, եղել էր Շապուհ թագավորի դպիրը, բայց Հուլիանոս ուրացողի Տիզբոն արշավելու ժամանակ գերի էր ընկել հույների ձեռքը և նրա մեռնելուց հետո Հորիանոսի արքունական սպասավորների հետ տարվել էր Հունաստան ու քրիստոնեական հավատ ընդունելով կոչվել Եղիազար. «Եւ յոյն լեզու ուսեալ՝ պատմագրեաց զգործս Շապհոյ և Յուլիանու»[82]։ Հասկանալի է, որ Խոռոհբուտ-Եղիազարն իր պատ-

---

80 Histoire du Bas Empire, par Lebeau. Nouvelle edition par M. de Saint-Martin. Tom III, Paris, 1825, p. 146.

81 Г. Халатьянц. Армянские Аршакиды, с. 237.

82 Խորենացի, Բ, հ, էջ 206։

սութիւնը գրած պետք է լինի արդեն իսկ Հոբիանոսի հաջորդների՝ Վաղենտինիանոսի և Վաղենսի կայսրութեան շրջանում։ Ցնցած որոշ հետազոտողների թերահավատութիւնը, Խորենացին պարսկա-հռոմեական պատերազմին վերաբերող վերոհիշյալ տեղեկութիւնները քաղել է IV դարի այդ պատմագրի երկից։ Այս բոլորից հետևում է, որ Խորենացու հաղորդածն իրոք պատմական տեղեկութիւն է։ Բիւթանիայի հետ կապված պատմական անախրոնիզմի ամբ առեղծվածը, որ ավելի քան հարյուր տարի համառորեն օգտագործվում է կեղծ Մովսեսի լեգենդը հիմնավորելու համար, մեր կարծիքով պետք է համարել լուծված։

Շնորհիվ Մովսես Խորենացու, Բիթիլիա նաստանգիստ-խաղսխաեայանը պետք է իր տեղը գրավի պատմական աշխարհագրության քարտեզների վրա։

ГДЕ НАХОДИЛАСЬ ВИФИНИЯ, УПОМЯНУТАЯ МОВСЕСОМ ХОРЕНАЦИ?

А. В. МУШЕГЯН

Резюме

В своей «Истории Армении» Мовсес Хоренаци рассказывает (III. 17—18), что после похода римского императора Юлиана в Персию (363 г.) и его гибели персидский царь Сапор, преследовавший римское войско, достиг Вифинии и осел там на долгие месяцы, поставив на берегу моря колонну со львом в знак своей победы. В 1883 г. немецкий арменовед Альфред Гутшмид опубликовал в Британской энциклопедии статью «Мовсес Хоренаци», в которой утверждал, что персы впервые достигли Вифинии при царе Хосрое II в 608 г. И поскольку это событие известно армянскому историографу, А. Гутшмид заключает, что Хоренаци жил и написал свой труд в VII в. Ныне некоторые исследователи (К. Туманов, Р. Томсон) считают поход персов в Вифинию неопровержимым фактом, позволяющим перенести Мовсеса Хоренаци в VIII в. Однако на основании сведения латинского историка Аммиана Марцеллина (XXV. 4, 23—24), незамеченного до сих пор другими исследователями, доказывается, что впервые персы вторглись в Вифинию и достигли побережья Пропонтиды после 325/6 г. при царствовании Сапора II. В то же время изучение по греко-латинским источникам историко-географического материала, связанного с римско-персидской войной 363 г. и последующими событиями, приводит к заключению, что в упомянутом эпизоде у Хоренаци речь идет не о провинции Вифиния (греко-латинская форма: Битюния), расположенной у пролива Фракийского Босфора, а имеется в виду неизвестная до сих пор гавань Битюля или Битилия, находившаяся в Сирии, на берегу Средиземного моря, близ города Селевкии (на реке Оронт). Об этой гавани и ее местонахождении упоминает хронограф Домнинос в связи с нашествием императора Траяна на парфян в 110 г. н. э. Свидетельство Хоренаци о проникновении персов до побережья Средиземного моря в 364 г. находит подтверждение в сообщениях Сократа, Созомена и Малалы. Таким образом опровергается один из веских доводов, послуживших основой для утверждения, что отец армянской историографии жил не в V в., а в промежутке VII—IX вв.